


ՊԱՅՄԱՆՔ
ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 Պր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու քիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Պր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2,60 Տօլար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Վ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ԱՄՆԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱՏ

Ծանոցման տողը
20 ամսին

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրոշքիւնք եւս
չեն տրոշիր

ԹԱԳՈՒՐ Ս. ԺԱՄԱՎԱՊՅԵԱՆ
ԵՒ
ԹԱԳՈՒՆԻ Յ. ՍԱՐԳՍԵԱՆ
ՆՇԱՆՈՒԵՑԱՆ
30 Ապրիլ 1903 Սիւնստոն

ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ՄԻՃՏ ՍՈՒՂ ԳՆՈՒԱԾ Է

Թաթառներու արշաւանքներէն և Սելճագներու տիրապետութենէն յետոյ, Արեւելքի քրիստոնեայ ազգերուն վրին ծանրացող Օսմանեան կայսրութեան լուծը և ոչ մէկ ժողովուրդ աժան չէ թօթափած:

Յոյներու ազատութեան այն մեծագոյն կոխը՝ որ երկու տարիներ տեւեց, ամբողջ ազգի մը դիցազնութեանց անվերջ շղթանում մըն էր. առանց անոր Հոմերոսի հելլենական դիցազններգութիւնները միշտ առասպելական պիտի մնային և առանց այդ զօտէպիք և ազգովին ոգորումին ու թափուած արեան հեղեղներուն Եւրոպան չպիտի շարժէր ու յունական թագաւորութիւնը այսօր գոյութիւն առած չպիտի ըլլար:

Գաթ Լիբանանի ինքնապարութեան. 1958 թուականին Մէքքէի և Ճիտտէի քրիստոնէից կոտորածէն շուրջ մէկուկէս տարի վերջն էր որ Տրուզ խուժանքը թողաւ թեմաք և զազգութեամբ թուրք պաշտօնեաներուն անգթօրէն կը ջարդէր Ասորիս տանի քրիստոնեաները. Լիբանանէն արեան հեղեղներ կը յորդէին. սուրէ զերծ մնացող կնամարդները միայն կը խուճապէին Դամասկոս. բայց հոն ալ քիչ օր վերջ կսկսէր սուկալի ջարդ մը որ 5000է աւելի քրիստոնեաներու կեանքը հնձեց. Այդ արիւնհեղութեանց հանգէպ երկուր ատեն եւրոպական պիտութիւնները իրենց չահարուն անհամաձայնութեամբ պրեթէ անտարբեր հանգիստեաներ կը մնային. բայց վերջապէս հազիւ ժողովուրդի մը

օրհասական ոգորումին նեցուկ հասաւ Նարեկէն Գ.ի վեհանձն միջամտութիւնը, որուն ազգեցութեան առջեւ միւս պիտութիւններն ալ ստիպեալ համակերպեցան Լիբանանը ինքնապար նահանգ մը ընելու թուրքիոյ գերիշխանութեան տակ:

Լիբանանէ վերջ կուգան Մօնթէնէկիօյի, Սերպերու, Հէրսէք-Պօնայի, Պուլկարաց և Կրէտացւոց ապստամբութիւնները և ազատագրումները. առնց ամէն ալ ահագին զոհաբերութեանց և ազգային համայնական ճիգերու արդիւնք են. Այսպէս երէկ մեզ գերեկից և այսօր ազատագրուած ժողովուրդներու յեղափոխական պատմութեանց էջերը մի առ մի թրջթափուով, իրենց յաջողութեան գաղտնիքը ուրիշ բանի մէջ չենք գտնիր, բայց եթէ անոնց ազգովին, միացեալ ճիգերուն ու յամառ գործունէութեանը մէջ:

Ահա էն թարմ օրինակ մըն ալ մեր աչքին՝ առիւտը ցցուած կրկենայ. տեսէք Մակեդոնացի Պուլկարներու յեղափոխութիւնը որ գրկուած է յոյն ժողովուրդի բոլոր դասակարգերէն. հոն մշակը իսկ գիւղացի, բժիշկ, կղերք և ուսուցիչը, սպան ու փաստաբանը. արհեստաւոր և վաճառականը միացած միայն ու միայն մէկ խտալի շուրջ, իրենց կեանքը, գրամը, գիրքը և ապագան զոհելով, ազգովին կը կռուին յամառաբար առանց օտարամուտ մտքերու յարելու, այլ միմիայն հարեմբի ազատութիւնը, ձեռք բերելու համար: Եւ այսպէս ուժերու միացումը և համայնական ոգորումն է որ կերպարաւորէ անոնց ալ յաջողութիւնը. Մակեդոնացի յեղափոխական առաջնորդները՝ մեծաւ մասամբ բարձրագոյն դաստիարակութիւն առած, եւրոպական համալսարաններէ դուրս եկած, բայց երբէք անձնատուր չեն ըլլար հայրենիքի ազատութիւնը օտար գաղութարներէ յետագաս ընելու. անոնք ընկերվարութիւն կամ անիշխանութիւն չեն քարոզեր, կեդրոնացում ապակեդրոնացում ըսելով սին վեճերով չեն երկպառա-

կիր, բանուորի կամ պուրժուարի խտրութիւն չեն դնիր, այլ բոլորին նպատակը մէկ կէտի յառած, ամէն մէկը իր ընդունակութեան համաձայն մէյմէկ պարտականութիւն ստանձնած յառաջ կը տանին կը բշեն համայնական ճիգով մը ազգային ազատագրումի նուիրական դատը: Եւ փորձերը ու պատմութիւնները ցոյց կուտան թէ այս պայմաններու տակ ոգորուող ժողովուրդներուն միայն ազատագրումը երաշխաւորուած է. իսկ մենք այս հին եւ նոր դէպքերուն ու օրինակներուն ականական շարունակ և ականատես ըլլալով, ինչ կընենք:

Կը պատասխանեմ թէ հակառակը կը գործենք. օտարամուտ գաղափարներով, սին վեճերով մեր ուժերը կը ջլատենք, և չը յաջողուլու համար ինչ որ կարելի է երեւակայել, կարծես, միայն այդ ընել կաշխատինք:

Պուլկարացի սպան իր ապահով գիրքը, աստիճանը և տիտղոսը մէկ կողմ նետելով կերթայ Մակեդոնիոյ լեռներուն մէջ կռուելու իր համացող եղբոր հետ. մինչդեռ մեր մէջ մէկը չը տեսնուցուցարդ ռուսահայ այն երեք հազարէ աւելի սպաններէն, որ քար միր յեղափոխութիւնը ստանձնէր: Այսպէս ինչնք թէ ռուսահայերէն տեսնուեցան մեր յեղափոխարներուն մէջ միայն այնպիսիներ որոնք բնկերվարական կամ անիշխանական գաղափարներու անձնատուր—բացառութիւնը յարգելի է— եկան հայրենիքի ազատութեան խնդիրը չփոխել իրենց գիրքերու վրայ սերտ ծրար մեր գիրքին ու կենցաղին մեւ. չարամարող օտար գաղափարներու հետ. եւ այդպէսով ստեղծեցին ազգին մէջ բարեկրեան խառնակութիւն մը, որմէ քառուղի սուին ալիւս յեղափոխութիւններ, մին միւսը չէզոքացնող, մէկը միւսը հայածող: Եւ այս եղերազանշտական վրկովոր սո ոգրայի արդիւնքը ունեցաւ որ յեղափոխութեան դրօշին տակ մտնելու քիչ չատ տրամադիր և գործին օգտակարապէս

ծառայելու կարող մեծամասնութիւն մը զգուանով չէզոքանայ ու բոլորովին մէկ կողմ քաշուի: Այսպէս ազգովին և ազգին բոլոր ուժովը տեսնուելիք գործը մասնաւորներու մենաշնորհը պարձաւ, փաստ ազգին ու ռամիկ ժողովուրդին՝ իսկ փառքը եւ անունը իրենց ըլլալու պայմանաւ և Հարիւր հազարաւորներ ջարդուեցան, ամբողջ գաւառներ մոխիր դարձան ու իրենք դեռ իրենց առաջի երգը կերպեն, ընկերվարներին, ռուսկալարներին, կեդրոնացուն, ապակեդրոնացուն, լաւուտը, պուրծոնա ըսելով:

Եւ այս եղերազանշտները կը շարունակեն դեռ յամառաբար ազգը բաժան բաժան ընելով և անշատ գործունէութիւն կեդրելով, որ նորանոր աղէտներ ստեղծելէ զատ դէպի ազատութիւն ոչ մէկ արդիւնք չը խոստանար մեզ:

ԳՈՒՐՄԷՅ

ՇՆՈՐՀԱՎԱՆՈՒԹԻՒՆ

Հաւ գործ կատարողները ըլլան արհեստաւոր կամ պաշտօնեայ, պէտք է քաջա երիւ դրամական միջոցաւ կամ հրապարակային շնորհակալութեամբ: Նոյնպէս վատ գործունէութեանց համար ալ՝ զգուանք յայտնել: Ռ. ստի ես իրիւ հայ անհատ, կուգամ հազար շնորհակալութիւններ յայտնել հրապարակաւ: Ձեր 35 թիւ Իրաւունքի մէջ «Թրքախօս երիտասարդներ» վերնագրով գովելի յօդուածին համար՝ ահա ճշմարիտ հայու մը գործը, որ հրապարակագիրներու առաջնակարգ պարտքերէն մին է:

Այս պատեհութեամբ կուգամ գրեթէ տասը օր առաջ պատահած դէպք մը իբր վկայութիւն մէջ տեղ բերել, որ կը հաստատէ Ձեր գրած «օտարներէն ամենանք» խօսքը: Պուլկար սպայի մը կին Օթէլ Գօմէրսիալի ճաշարանին մէջ կը հարցնէր ճաշարանապետին թէ «հոս Յունաց եւ Հայոց դպրոցներ չը կան» ինչպէս եղեր է որ թուրքերէն կը խօսին:

Ճաշարանապետ օտար մը ըլլալով ինձ ուղղեց տիկինին հարցումը: Եւ չկրնայով ուրիշ պատասխան մը տալ, նար հարցուցի թէ քանի՞ տարեկան էք: Ըսաւ թէ 21 տարեկան է. ուստի պատասխանեցի թէ 25 տարի առաջ հոս տիրող լեզուն տաճկերէնն էր:

Տիկինը ըսաւ «բայց ես պզտիկ տը-

Պաշտօնը կը տեսնեմ փողոցներու մէջ հայ թէ յոյն որոնք տաճկերէն կը խօսին»։ Եւ իր դէմքը ծանկեաց ու կարծեմ թէ ճերմակ մազերուս յարգանքի պակասութիւն մը յիշատակելու քաղաքավարութեամբ, աւելի ատաղջերթալով լռեց...

Կը խնդրեմ, տէր խմբագիր, հաճեցէ՛ք ներկայս հրատարակել եւ այդպէս անգին յօդուածներով շարունակաբար խրատել մեր փողովուրդը։

Մնամ յարգանքով
Մ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

ՆԱՄԱԿ ԱՐՓԻԱՐԵԱՆԷ

Վեներաբել 12 Մայիս

... Խմբագրապետ Իրաւունքը ԻՐԱՆԻ ՈՒՆԻՔԻ Ապրիլ 16ի թիւին «Տ. Արփիար եւ Տ. Արզուեան» տեղեկութեան նկատմամբ, քանի որ զիտողութիւններուս հրատարակութիւնը Ձեր բարեացակամութենէն կը խնդրեմ։

Յըսէք թէ «Տ. Արզուեան կուսակցութեան ընտրութեամբը իրեն (Արփիարին) յաջորդեց»։ Ձեզի սխալ տեղեկութիւն տրուած է։ Արզուեան ինքն չի յաջորդած, այլ ինքի պաշտօնակից եղած է։ Հնչակեան կեդրոնէն հրաժարական տուած եմ 1901 յունվար 15ին։ Իսկ Արզուեան՝ կեդրոնին անդամ ընտրուած է 1899 յուլիսին կամ օգոստոսին։ Թուականը կարելի է ճշդել կեդրոնին ընդօրինակութեանց տետրէն։ Հետեւաբար տարիուկէս միասին պաշտօնավարած ենք։ Եթէ իմ հրաժարելէս վերջը ինքի յաջորդ մը ընտրել իսկ պէտք ըլլար, առաջապէս պաշտօնին չէր կրնար կոչուիլ ոչ մին անոնցմէ որոնք կեդրոնին աղդէն անդամ էին, ինչպէս՝ Փափազեան, Մկրտիչեան, Արզուեան եւ այլն։

Իսկ իմ հրաժարելէս վերջը տեղի ունեցած փոփոխութիւնները ինքի հետ ունէ անձնական վերաբերութիւն չեն կրնար ունենալ, քանի որ ես

հրաժարական տուած եւ քաշուած էի։

Ձեր միւս գիտողութեանց մասին կրնաք լուսաբանել իմ նամակէն զոյր մօտերս Հնչակեան մասնաճիւղերուն պիտի գրեմ, եւ որուն մէկ պատճէնն ալ կը խրկեմ նաեւ Իրաւունքի խմբագրութեան։

Ներկայ կացութեան վրայ չեմ խօսիր։ Իրողութիւնները օրինաւոր միջոցներով պիտի պարզուին եւ պիտի քննուին ոչ միայն կուսակցական խորհուրդներ, այլ եւ ազգին կենսական շահերուն հետ անմիջական յարաբերութիւն ունեցող գործեր։

Ես առ այժմ բան մը չեմ ըսեր։ Ոչ ոք իր անձին համար աննպատակ կը բարբառի։ Բայց շատ չանցած թէ Հընչակեան կուսակցութիւնը եւ թէ հայ ազգը պիտի անդադառնայ թէ իմ մահաւաճումս—մինչեւ իսկ եթէ բնական ըլլար—կարգ մը խնդիրներ, ու գոցէ մինչեւ իսկ գործին ամբողջութիւնը, մութի մէջ պիտի մնային։ Ընդունեցէ՛ք խորին յարգանքներս

Արփիար Արփիարեան

ԱՆՍՈՒԱՆԱԼԻ ՇԱՀԷՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Շար. Ասխորդ Թիւն)

Միտն ձերակալելու գացողները երբ ձեռնուռնայն վերադարձան կառավարութիւն սկսեց հարցաքննութեան ենթարկել բերդարդերէն քանի մը հայերը եւ Միտի պահապան ոստիկանները, կարծելով թէ վերջինները անկէ կաշառուած եւ փախուստի իրենց կամաւ եղած է։ Կառավարութիւն այդպէս խորհելով շատ կը սխալէր, աշխարհի ծրագրով մը եղած էր փախուստն որ կարելի է մինչեւ օրս ալ կառավարութիւն իր մտքէն անդամ անցուցած չըլլայ։

Միտի համար՝ որ իբր բեր-

դարգել բերդին մէջ պատելու ազատ էր, փախուստի այլեւայլ միջոցներ գտնել կարելի էր. իսկ բանտարկեալ լոյս համար փախչիլ անկարելի էր. ինչպէ՛ս որ 50ի չափ այլեւայլ ազգէ բանտարկեալներս մօտ երկու ամիս աշխատելէս վերջ չը յաջողեցանք։

Միտն իր փախչելու երկրորդ օրը պէտք էր ինքի լուր զրկէր թէ Պ. Պ. Ն. ի հետ թէ ապահով իր տեղն հասած է։ Երրորդ, չորրորդ օր եղաւ դեռ լուր մը չառի եւ մտատանջութեան մէջ էի։ Ա. Պ. փնտռել տուի եւ չը կարողացայ գտնել։ Ուստի բոլորովին սկսեցի կասկածիլ, որովհետեւ լաւ գիտէի թէ, Արապ ազգը ո՛ր աստիճան ստախոս եւ խարբայ է. բայց ի՞նչ կարող էի ընել, քանի որ Արապ ժողովուրդէն իզատ ուրիշ ձկար Աքթիայի մէջ, սխիպուած էի այդ տեսակ մարդոց միջոցաւ գործ կարգադրել։

Վերջապէս վեցերորդ օրը եկաւ Ե. Պ. եւ պատմեց թէ Միտն ինչ անտանելի չարչարանքներով եւ տառապանքով իրենց քով հասած է։ Մենք հարկ չենք տեսներ մանրամասն նկարագրել հոս։ Միտն որոշած էր քանի մը օր հանգիստ ընելէն վերջ ճամբայ ելնել ու գնալ։

Անցան ամիսներ՝ տարին կը մօտենար, վերջապէս Միտէն համակ մը չառի. ես գիտէի որ նա դիւրութեամբ օձիքը ձեռք տուող չէ եւ թէ իրեն ապահով հասցէ մը տուած էի, բայց թէ ինչո՞ւ ինքի չէր գրեւ այդ զարմանալի էր։

Բանաւէն ազատուած Կիպրոս կը գտնուէի, յանկարծ «Հնչակեան» ընկերներս «Շահէն»ի մը խօսք կ'ընէին ինքի, բայց չէի գիտեր ո՞վ է Շահէն եւ ի՞նչ տանջութիւն ունի ինքն հետ այդ խօսակցութիւն երբ ընկերներս ըսին թէ Շահէնը իմ սիրելի եւ համակրելի ընկերն Միտն է։ Այլ եւս ուրախութիւնս չափ սահման չունեցաւ, հետաքրքրուեցայ, ուզեցի շատ շուտ լսել Միտի պատմութիւնը։ Ահա թէ ինչ տեղեկութիւններ տուին

ինձ ընկերներս Միտի մասին կցկտուր կերպով՝ եւ թէ Միտն ի՞նչ կը գրէր ինձ համառօտ կերպով երբ ես Բարիդ կը գտնուէի։ Թէեւ Միտն ժամանակին քանի մը անդամ գրած է եղեր ինքի իմ բանտ գտնուելու միջոցին, բայց ծանօթ մարդահրէշ մը... Միտի ինձ ուղղած նամակները վարդած եւ ինքի չէր զրկած քաջամտ կապիւս թաքուն նպատակաւ մը։

Միտն շատ մը տառապանքներ կրելով Կիպրոս կը մտնէ Շահէն կողմ անուան տակ։ Հոն կը գտնէ խել մը Հնչակեան ընկերներ, կորոշեն խմբակին Կիպրոս մտնել եւ կը յաջողին։ Հոն կը գտնեն Աղասին եւ իսկ Կոյն կերթան Չէյթուին, Կորոշի ու Շահէն եւ Ապահը Հաճըն կերթան. գործով մը Շահէնի Սիւ եւ Ատանայ կերթան հարկ լըլլայ, իսկ դեռ Ատանայ չը հասած կը ձերբակալուի. բայց քիչ օրէն կ'ը փախչի ու ուղղակի Չօքմարզուան կերթայ։ Շահէն Չօքմարզուանի մէջ հաղիւ կրնայ պատրաստ գտնել 20 ի չափ ուրիշապաշտ գին. ուստի իբր Հնչակեան, Չօքմարզուան կը պաշարուի յանկարծ 10,000 չափ կանոնաւոր զօրքերէ եւ թիւք խուժանէ, որով կ'ուրն անխուսափելի կը դառնայ՝ եւ թէ կսկսի իսկոյն։

Շահէն իր շատ սակաւթիւ կողող ընկերներով օրերով կը դիմադրէ թիւք բանակին միշտ կորուստ պատճառելով, այնպէս որ բանակը պարտուած կը նահանջէ եւ Չօքմարզուանի պաշարուան կը վերջանայ, յաղթութիւն Հնչակեան ընկերներու կողմը մնալով, որոնց պետն՝ կամ լաւ է ըսիլ հրամանատարն էր մեր հերոս Շահէն։

Յ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆ
(Շարունակելի)

ՔԱՀԱՆԱՅ ԿՈՒՉՈՒԻ

Ռուսները Պատ. Թաղ. Խորհուրդը կը խնդրէ մեզմէ ծառայողներ թէ տեղւոյն եկեղեցւոյն մէջ պաշտօնավարելու համար քահանայի մը պէտք կայ։ Ուստի այդ քաղաքին մէջ պաշտօն ըստանձնելու տրամադրի քահանաներ կրնան գիմել ուղղակի տեղւոյն Թաղ. Խորհուրդին եւ բանակցել։

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

(77)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԹԱԼԱՆԻ ՏԱՐԻՆ

Ժայռներէն վեր մազցելով, խեղճ կրնը հետեւեցաւ Ներսէս Արծրունիին ու պահակին։ Բաւական յառաջանալէ ետքը, խուժելին մօտ հասան։ Լուսին չըկար. բայց աստղերը կը լուսաւորէին չըրկայքը սփռնի ցոլքերով։ Խուժը խորին պատկանանքով մ'ոտքի կեցաւ եւ բարեւեց Ներսէս Արծրունին։ Միայն թէ ժայռի մը ներքեւ մէկը ընկողմանած էր, որ չը կրցաւ ոտքի կենալ։ Ներսէս Արծրունին ու ծպտաւ կրնը մօտեցան անոր։ Ժայռի ներքեւ ինկողը Վազգէնն էր։ Օ՛հ, մայրը ճանչցաւ... ու չը կրնար իմանալ ինչու, որքան յաջին ինկաւ ու լացադանչեց։

Ի՞նչ ունի՞ս, զաւա՛կս, ինչո՞ւ համար ինկած ես այս ժայռին տակ։

Վազգէն մօրը ձայնէն սթափած՝ աչքերը բացաւ ու հարցուց։

— Ո՛հ, մայր իմ... դուն հո՞ս։

— Եկա՛յ, զաւա՛կս, եկա՛յ... Սերտս բերաւ

զիս... կարօտս առաջնորդեց իմ քայլերս, թոթովեց տարաբաղդ կրնը՝ Վազգէնի գլուխը գրկացը մէջ առնելով։ Ըսէ՛, ի՞նչ ունիս... ի՞նչու համար ինկած ես այս ցուրտ ժայռին տակ։

Վազգէն խղճուեցաւ... իր էութիւնը կը հասնէր երթալով ու չէր կրնար խօսիլ։ Ո՛հ, մայրն էր իր քովը... մայրն էր իր հետը խօսողը այն պահուն՝ ուր անողորմ մահը կը սիրէր իր բովանդակ կեանքին վրայ... ու ինչը սպառած կանխիկը մը պէս կը մարէր ինքը...

— Մայր իմ... թոթովեց Վազգէն հեծկտանքով մը. ա՛խ, կը մեռնիմ ա՛խ՝ քու գրկաց մէջ... Բայց երջանիկ եմ որ դուն ձեռքովդ պիտի հանգչեցունես գլուխս սա պաշտելի հողին մէջ...

Մեռնի՞ս... ո՛հ, Աստուած իմ... ի՞նչ կը լսեմ... ընդհանրեց տարաբաղդ կրնը Վազգէնի կուրծքին վրայ սեղմելով իր կարօտեցած ու հրատապ կուրծքը։

— Մի՛ լար, մայր իմ... մի՛ լար... ասիկա հայուն ճակատագիրն է... միմիայեց Վազգէն, խղճելով իր կտկորը ցամաքեցող չոր ու մահացուցիչ հազը...

— Ըսէ՛, զաւա՛կս, ո՛ւր տեղդ կը ցաւի... գոչեց կրնը վշտի մը գերազոյն ճիգը խղճելով իր մէջ։

— Կո՛ւրծքս, մայր իմ, կո՛ւրծքս... Կուրծքս... թշնամիներու արիւնը ծծեցի՝ ամիսներով ու վրէժս լուծեցի՛։ Կը մեռնիմ, այո՛, բայց քու կարօտովը չեմ փակել աչքերս... Ժամ մը ետք... մայր իմ... Ժամ մը ետք թո՛ղ սիրելի ընկերներս փորեն գերեզմանս... իսկ դուն ձեռքովդ տո՛ւր հանգչեցո՛ւր զիս անոր մէջ... Երբ վրաս հողը

ծածկէ՛ք ու հեռանաք ամէնքդ ալ, դուն արցունքներդ թափէ, իսկ ընկերներս՝ իրենց ուխտը թո՛ղ կրկնեն ու այնպէ՛ս բաժնուին... Ա՛խ, մօտ եկէ՛ք, սիրելի ընկերներս, եկէ՛ք որ համբուրեմ ձեզ ու ըսեմ իմ վերջին հրաժեշտս...

Վազգէն իր բոլոր ընկերները համբուրեց ու գլուխը դրաւ մօրը կուրծքին վրայ։ Մայրը զողորմով չըթուենքները մօտեցուց անոր ցուրտ այտուղուն ու սկսաւ լալ։

Գիշերուան ժամերը սահած էին...

Վազգէն մեռած էր մօրը գրկաց մէջ։ Ընկերները շուտով մը փոքր փորած էին։ Մայրը ձեռքով հանգչեցուց անոր գլուխը, համբուրեց ու այնպէ՛ս բաժնուեցաւ։

Ներսէս Արծրունին Վազգէնի տեղ անոր տեղակալը խմբապետ կալուեց ու կոնջ հետ քաղաք վերադարձաւ։

— Հիմա ինչպէ՞ս պիտի կրնար ձեզ գոյութիւնը ծածկել, հարցուց Ներսէս Արծրունին տարաբաղդ կոնջ։

— Ահադ եղէ՛ք... միմիայեց կրնը. մուրացկանի մը հագուստը կը հագնիմ ու այնպէս որդուոյ վրէժը կը լուծեմ թուրքերէն։ Ա՛խ, մօր մը վրէժը պիտի տեսնէք թէ ի՞նչ է։ Ուրեմն մնաք-բարո՛ւ... Եւ խառնապարտ եմ ձեզ որ վերջին անգամ ըլլալով զաւակիս քովը տարեք զիս...

Լոյսը ճեղքուեցաւ մօտ, թշուառ կրնը հազաւ իր հագուստը ու մեկնեցաւ։

Ներսէս Արծրունին, առանց վայրկեան մը հանգչելու, շարունակ մտածեց թէ ի՞նչ զիբը պէտք էր ըսնել ներկայ կացութեան մէջ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

(ՄԵՐ ՄԱՍՆԱԽՈՐ ԹԱԹԱԿՆԵՆ)

Անցեալ շաբթուան նախարարական տաղնապը իր բաւարար լուծումը ստացաւ վերջապէս ։ Տր. Տանէվի նախարարութիւնը արդէն օրեր առաջ յայտնի կը տեսնուէր թէ երկուստեք մէջ կը գտնուէր եւ անոր տապալումը անխուսափելի կը համարուէր ։ Իշխանը ընդունելով Տանէվի դանդիկ հրաժարականը ուղեց կազմել այնպիսի նախարարութիւն մը որուն մէջ բոլոր կուսակցութիւնք ներկայացուցիչներ ունենան եւ այնպէս ալ եղաւ ։ այժմ ունինք խառն նախարարութիւն մը որուն պետն է զօր. Բաշօ Բէթթօֆ, Շուվաքի, որ 1902ին ալ մի քանի ամիս նախարարացեալ պաշտօն վարեց ։ Ներքին Գործոց նախարարն ալ Տ. Բէթթօֆն է ։ Տօպրուճագի, նախկին քաղաքացեալ Սօֆիայի, նախագահ Ազգ. ժողովոյ եւ նախարար Հանրային շինութեանց 1894ին ։ Այս հայրենաւէրը 1877ի Ռուս-թրքական պատերազմի առին Շիբկայի մէջ իր ձախ ձեռքը զատակէն կորսնցուցած է եւ Սթամպուլի մահէն ի վեր նոյն կուսակցութեան պետն էր ։

Նոր նախարարութիւնը պաշտօնի գլուխ անցնելուն պէս երէկ առաջին անգամ ի ժողով գումարուեցաւ եւ սորոցք իր յայտագիրը որուն մէջ նախ պարզել է յետոյ այն պատճառները որոնք հրաժարուցին նախորդ նախարարութիւնը եւ այն հանգամանքը որ զիրենք ի պաշտօն կոչեց՝ կը յուսան թէ իրենց ջանքերը լիովին պիտի գնահատուին պուլկար ժողովուրդէն եւ թէ Իշխանն ալ իր կարող աջակցութիւնը պիտի տայ իրենց ։

Յայտարարութիւնը կը լսէինք ։ «Կառավարութիւնը իրեն պարտք կը համարէ յայտարարել թէ՝

1) Իր արտաքին քաղաքականութեան մէջ պիտի ջանայ պաշտպանել պետութեան գերազոյն շահերը, լաւ եւ ուղիղ ընթացք մը ունենալ հանդէպ բոլոր տէրութեանց եւ տաճել անկողն

ու արտաքին յարաբերութիւն դէպի մեր ազատարարն Ռուսիա ։

2) Իր ներքին քաղաքականութեան մէջ պիտի հետեւի Սահմանադրութեան երկրին օրէնքները անգամ մը եւս յանձնարարելով բոլոր պուլկար քաղաքացիներու առանց քաղաքական դաւանութեանց խտրութեան ։

Կառավարութիւնը պիտի աշխատի Ազգին համար ։ Կոթնելով անոր, հասնելու համար իր ամենազլխաւոր թեւապնդելի յայտարարութիւնն է՝ պետութիւնը իր ներկայ կացութենէն դուրս հանել, առանց վնասելու պուլկարական ազգային շահերը ։

Եւ արդարեւ Պուլկարիոյ ներկայ կացութիւնը առաւել քան երբէք փափուկ եւ ճակատագրական է, Մակեդոնիոյ մէջ տեղի ունեցած յարաճուն խռովութեանց պատճառաւ ։ Եւ միթէ Տանէվի դանդիկն ալ հրաժարման գլուխաւոր պատճառն այդ քար զայթակղութեանը չէ՞ր ։

Այդ պատճառաւ այսօր թուրքիոյ եւ Պուլկարիոյ յարաբերութիւնները ըստ բաւականի լարուած կերեւին ։ Նոր նախարարութեան յայտարարութեան մէջ թէ եւ որոշակի բան մը չէ ըսուած այս մասին, բայց յայտնի է թէ «ներկայ կացութենէն դուրս հանել» տեղեկութիւնը կը վերաբերի Մակեդոնական խռովոյն որ կ'ընտան հանգամանք մը ստացած է այս միջոցին եւ նոյն իսկ ըսողներ կան թէ թուրքիոյ եւ Պուլկարիոյ մէջ պատերազմ մը անխուսափելի է ։ Եւ թէ Պուլկարիոյ գերմանական զեպանք իր վերջին տեսակցութեան մէջ Սուլթանին մասնաւորապէս դրած ըլլալ պատերազմ հրատարակել Պուլկարիոյ դէմ, իբր սկզբնապատճառ Մակեդոնիոյ ներկայ խառնակ դրութեան ։ Եւ աստիճան մը ստուգութիւն կը գտնեն այս ըսուածները քանի որ կարգ մը իրողութիւններ կուզան հաստատել զանոնք ։ Ձէթէ միայն Մակեդոնիոյ մէջ ուր պուլկար տարրը այսօր բացարձակ կերպով հալածանքի եւ բանտերու մատնուած է, նոյնիսկ Պուլկար մէջ պուլկար անհատը վաճառականը եւն թուրք կառավարութեան հետապնդումին առարկայ են ։

Ասոնցմէ զատ զինուորական այն

մեծ պատրաստութիւնները, զօրքերու շարժման մէջ դրուիլը եւ անոնց շարունակական տեղափոխութիւնը դէպի Եւրոպական Թուրքիոյ նահանգները, ասոր վրայ աւելցնելով նաեւ Եւրոպական քառ գիւնադիտութեան պաղ վերաբերումը դէպի Մակեդոնիոյ տաքնապալի կացութիւնը եւ ձեռքի տակէ Սուլթանին եղած գրգռմանը՝ փաստեր են որ կապացուցանեն թէ բոլորովին անհիմն չեն այս լուրերը, թէ ժամանակը յղի է եւ օրըստօրէ կարելի է նորաւոր անակնկալներու հանդիսատես ըլլալ ։ Տեսնենք Բաշօ Բէթթօֆի (որ նախարարացեալ մը ըլլալէ աւելի զօրավար մըն է) նախարարութիւնը պէտք եղած քաջութիւնը եւ անվնասութիւնը պիտի ունենայ, զիրաւարակելու համար այն ամեն խռնդոտները եւ արգիւքները որ իր ճաթուն վրայ չափէն աւելի զիջուած կերեւին, եւ փարտաւելու այն կ'ընտաններ, խորշոմները եւ սեւ ամպերը որ ունենան աւելի այսօր կամպոտեն եւ կը մթագնեն պուլկարական երկինքը ։

Առջի օր քաղաք ժամանեց Պուլկարիոյ պատրիարքական փոխանորդ Գեր. Վահան վրդ. Յակոբեան, որ նախապէս իրեն համար պատրաստուած Օրիենթ պանդոկին մէջ սենեակ մը իջեւանեց ։ Մենք պատենուութիւնը չունեցանք զիս զինքը տեսնելու, բայց կրտսի թէ քաջաբան եւ հաշտարար մէկն է եւ թէ ձեռնարկութիւններ պիտի ընէ Պուլկարիոյ մէջ գաւառական ժողով մը կազմելով առաջնորդի մը ընտրութիւն կատարել տալ ։ Ինչքանքաւ մեր փափաքն ալ այդ է արդէն ։ Ուրիշ առթիւ կը գրեմ այս մասին ։

Սօֆիան 8 մայիս ԱՐՄԵՆԱԿ

ԻՐԱՒԱՒՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Կ. Էրզնկուցեան Գահիրէ ։ — Հաւաքակ Զեր գրածին, զիս ոչինչ չենք ստացած Ա. Բրուտեանէ եւ ոչ ալ իր ազգականէն ։

— Տ. Արզումանեանց-Սագունի Լոնտոն ։ — Ստացանք Զեր պաշտինական տաղնապը, զոր մեր յաջորդ թուով պիտի հրատարակենք ։ Նաեւ վերջին ժամուս մեզ հասաւ Զեր Բէկ դաւադրական նամակի ընդօրինակութիւնը Տ. Զիթեանի եւ ողբացեալ Միսաճանիի գէմ ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՊԱՍՏ ԶԵՅԹՈՒՆԻ

ԱՆԱՀԻՏԷ կը տեղեկանանք թէ, Բարիզի Հայոց հոգեւոր հովիւ Տէր Վառձապուհ քահանայն ձեռնարկած է ինպատ Զէյթունի հանգանակութեան եւ առաջին օրը իսկ 350 ֆր. հաւաքած է ։ Նոյն թերթը կ'իմանայ թէ Բարիզի մէջ այդ նպատակաւ մասնախումբ մը կը կազմուի այս օրերս աջակցութեամբ տեղւոյն Թաղ. Խորհուրդին ։

— ԱԼԷԿՍԱՆԴՐՈՅ մէջ ալ Զէյթունի հայութեան թշուառ կացութիւնը ամօքելու նպատակաւ երիտասարդներէ ընկերութիւն մը կազմուեւր է ։

ԱՆԳԼԻՈՅ մէջ ալ հայերը նմանօրինակ հանգանակութեան մը ձեռնարկեւր են ։

— ՆԻԲՕՍԻԱՅԻ (Կիպրոս) մէջ եւս հանդէս մը կազմակերպուած է Զէյթունի նպատակաւ համար ։ Հանդէսը տեղի ունեցած է Զատիկին երկրորդ օրը ։

— Տ. Մ. ԶԵՐԱԶ իր հաւաքած գրամները Պուլկարի Պատրիարքարանին միջոցաւ Զէյթուն լրկել յս յտարարած էր, որպէսզի յատկացուին որբանոցի մը հաստատման ։ Այս յայտարարութեան վրայ Անահիթի իմօպրիւր զիտել կուտայ թէ Տ. Զէրազ քաղաքական գործիչ մը ըլլալով իր հաւաքած գրամը կասկածելի կը թուի թուրք կառավարութեան որ որոշուած նպատակին համար գրամին գործածուած կրնայ արգելիլ ։ Ուստի Տ. Զօպանեան լաւագոյն եւ յարմարագոյն կը մեպէ

Թուրք կառավարութեան ծրագիրը միայն թաւանով չէր վերջանար, այլ Սասունի աղետալի վիճակին պիտի ուղեք հասցունել վանի նահանգը ։ Եւ տեսաւար կոտորածը վճռապէս կը պատրաստուէր եւ գրեթէ անխուսափելի կը դառնար ։ Ա՛խ, փուռ տեղ Դրօշակեան ու Հնչակեան լիազօր ներկայացուցիչներուն կը դիմէր, փուռ տեղ Ազգին ամենէն ազգեցիկ մարդոց կը վազէր . . . ամէնքն ալ վտանգին հանդէպ սմբեք մնացել էին ու չէին գիտեր ի՞նչ ընենին ։ Երկու խումբ մնացել էր իր ձեռքին տակ . . . որոնք անկախող էին դիմադրելու ։

Առաւօտ, արեւը ծագելու մօտ, Ներսէս Արծրունին իր կերպարանափոխուած տարազով ապաստանաբանէն դուրս ելաւ եւ Դրօշակեան ներկայացուցիչին գտնուած տեղը գնաց ։ Ներկայացուցիչը խոստովանելով հանգիւս թէ վտանգին հանդէպ կը գտնուէին, յայտնեց որ Պարսկաստանէն խումբ մը ծառայ ինկած էր ու մօտ օրերս պիտի մտնէր քաղաքը ։ Միեւնոյն խոստումը լսած էր նաեւ Հնչակեան ներկայացուցիչն ։ Ուրեմն կուենար չորս խումբ . . . Եթէ լաւ կերպով կարգադրութիւն մ'ըլլար, այդ չորս խումբը բաւական ուժ մը կրնար ցոյց տալ ։

Բաժնուելով անոնցմէ, դարձեալ իր ապաստանարանը մտաւ ու ծրար մը դնելով թիւին տակ ուղղակի Սղաչ գեղին վերեւէն Վարազայ լեռան մէջ յառաջացաւ ։ Երբ ամայի վայր մը գտաւ եւ անոր չորսգին ապահով ըլլալը հաստատեց, բացաւ թիւին տակ պահած ծրարը ու մէջէն ամենաթանկագին տաւրազ մը հանեց, որ Գուրտ պէկերու յատուկ էր ։ Այդ ծրարը սահեց լեռան ապահաժներու մէջ ու արագ արագ դէպի մօտակայ գեղը դիմեց ։ Գեղին

Ռէսը ծանօթ էր իրեն . . . յայտնեց թէ ձիւն մը պէտք ունէր ։ Ռէսը հաւանեցաւ եւ իր ձին անոր տուաւ, որուն վրայ թուրք սրմայ թիւերով բանուած էր ։ Ներսէս Սրբաւորին հեծաւ ձին ու լեռան ա՛յն տեղը եկաւ, ուր պահուած էր ծրարը ։ Եթէ վար իջաւ ու հազնիւով Գուրտ պէկի տարազը, նորէն հեծաւ ու արագ արագ յառաջացաւ Գաղաթը ։ Այնքան գեղեցիկ կերպով վայելցուցած էր այդ տաւրազն իր պարթեւ հասակին՝ որ տեսնողները փողոցին մէջ զմայլած իւրեն կը նայէին . . .

Յաղթական գնացքով մը ձին քնց վալի փաշայի ապարանքին առաջը եւ կեցուց ։ Յետոյ վար իջաւ ու անոր սանձը ներքինապետին տուաւ, որ հեռուէն տեսած ըլլալով, եկած էր զիմաւորելու ։

Երբ թիկնապահ մը փաշային դարձեալ տարաւ զինքը, շատ սիրով եւ համակրութեամբ ընդունելութիւն մը եղաւ իրեն ։

— Բարե՛ եկա՛ք, պէ՛կ, ըսաւ վալին՝ իր անխռով նայուածքը պատշուանելէ ետքը ։

— Բարե՛ տեսանք, փաշա էֆէնտի, միմիջեք ներսէս Արծրունին իր հոգեւոր յուզումը զսպելով ։

— Անչու՛շտ, կարեւոր պատճառ մ'ունիք, անանկ չէ՞, հարցուց վալին ։

— Այո՛ . . . այսօր երկու գիշեր է որ լեռներու մէջ կը ծածրորդեմ եւ ամենեւին հանգիստ թողած չեմ ձիս, փաշա էֆէնտի, եկած եմ Զեր վսեմութեանը յայտնելու թէ քուրտերս ոտքի ելած են ամէնքն ալ ու հրամանի մը կրնապան . . . Ի՞նչու կուչացնէք . . . Ի՞նչ պատահեցաւ . . .

— Քանի՛ հոգիէ բաղկացած են ձեր մարդիկ ։
— Երկու օրուան մէջ իմ շուրջս կրնամ հաւաքել

4000 կռուողներ, որոնք մէկ հրամանիս կըսպանն . . . Եթէ «մոռ'ք, ըսեմ, մէկը գտաւ իբ չըլլար» ։

— Խիստ լաւ, ատոնք չը մասնակցեցա՞ն թաղանի ժամանակ ։

— Ինչպէս չէ՞ . . . ամէնքն ալ մասնակցած են, ու գիտեն թէ ֆլայ մը ի՞նչ կարգէ . . .

— 4000 մարդի՛կ . . . բաւական մեծ ուժ մ'ունիք, բարեկամս, միմիջեք վալի փաշա . ու ոտքի ելնելով ըռնեց կարծեցեալ Գուրտ պէկին ձեռքը, որ գողաց՝ սեւ օձի մը դպածի պէս ։ Ըսել է թէ պատրաստ էք, չէ՞ ։

— Հարկա՛ւ . . . Աչքերնիս ծամբան մնաց . . . Անցեալները մեր Եւրոպ կարգաց ճշմարիտ Միւսալիմաններու ուղղեալ հրաւերը . . . ասոր վրայ աւելի գրգռուած են . . .

— Ուրախ եմ որ ձեր մարդիկ մեծ փափաք կը յայտնեն երկրին ու անոր թագաւորին ծառայութիւն մատուցանելու ։ Որչա՛փ որ ֆլան այս հողին վրայ չը մնար ճգնուած գլուխով, մենք հանգարտ չենք կրնար ապրիլ ։

— Մեր ուզածն ալ այդ է . . . բայց ինչու թոյլ չէք տալ ։

— Մօտ օրերուս մէջ պիտի լեցուի ձեր փափաքը . դուք եթէ կարող էք աւելի մարդ հաւաքեցէք ։

— Մինչեւ տասը հազար մարդ կրնամ գլուխս հաւաքել, եթէ կառավարութեան առաջարկելիք պայման ընդունուի ։

— Ի՞նչ է այդ պայմանը ։

(Շարունակելի)

որ դրամները կեդրոնական Բանկը Հայոց քաղաքային մաս եւ անոր ձեռքով ղրկուին Ձէյթուն ։

Անանիսի խմբագրին այս դիտողութիւնները մեզ համար չեն , քանի որ հոս Թաղ . խորհրդոյ ձեռքով պաշտօնապէս սկսուած է հանգանակութեան եւ այդ խորհրդը ռեզոլուկի Պատրիարքարանի միջոցաւ ապահով կրնայ ղըրկել իր գոյացուցած արդիւնքը ։

Սխալ ըլլալ կը կարծենք այն տարածայնութիւնը թէ տեղւոյս Թաղ . խորհրդը իր հաւաքելիք դրամէն իրեն բաժին՝ մը պիտի հանէ եղբր ։ Մենք չպիտի հաւատանք այս զրոյցին մինչեւ չոր շաբաթի իրողութիւններ չգան հաստատել ։

— ՊԱՍՏՈՅ Ազգ . հիւանդանոցի երբորդ թեւին չինութիւնը ի մօտոյ պիտի սկսի ։

— Ս . ԷՋՄԻԱՄԱՆԱՅ Ամենայն Հայոց Հայրապետը հետեւեալ հեռագիրը ռեզոլու է կրկնելու Տ . Սահակ Կաթողիկոսին ։

«Կը շնորհաւորեմ Ձեր օծումը եւ բարձրացումը յԱթոռ Ծնորդաւորին ։ Կը մաղթեմ որ Հոգւոյն Սրբոյ օծանդակութեամբ լրացնէք ձեր պարտաւորութիւնները , ի փառս Աթոռին եւ ի հոգեւոր միւսթաբուլութիւն ժողովրդեան» ։

— Աթէնքի մատուռին շինութեան համար Պողոս փաշա Նուպար 15 ոսկի նուիրած է ։

— Վէ.Հ . ԿԱՌՈՂԻԿՈՍԻՆ արծաթեայ գրի կազմած մը նուիրած է Աբրահամ փաշա Բարթոլ . Ս . ԷՋՄԻԱՄԱՆԻ . 1600 ամսակին առթիւ ։

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Պապը Ալի Բուսիա վէ Աւստրիա էլիւներին պիտի պէյաննաւ մէ թէպիլի իտուպ , Սելանիք վուգուածընտա գոմիթէլէրէ պուկար հիւքիւմէթինին տախի մէտ . խելտար պուլընտլ ղընը , վէ Մանաստըր գըրկընընա Մաքէթոնիալար մէտուլ օլտըղընը կէօսթէրմէք իսթէմիշ տիր ։

Ֆազաթ Պապը Ալինին պու իթ . համաւանքսի գօնաօլալարըն ըաբօրթլարընա մուղայիր պուլընտըղընտան էհէմիլէթիսիլ գալաճագ տըր . վէ անընէ Պուկարիայը մէտուլ թուլթուպտէ պիր մուհարէպէյէ սէպէպիլէթ վէրմէք իսթէյէն էսկի թիւրքէր (պուլարտա սապըգ սատրապաճ Քիւչիկ Սայիտ բաշա տախի [պուլընտըր] արգուլարընա մուաֆագ օլտմայաճագլար ։

Մաքէրուիա

Տէպրէ Մէտրօպօլիտի պիր պուչուգ այտան պէրու Միթրօպօլիտաա պուլընուպ , ախիւրէն Սելանիկէ կիտէր իքէն , պէրապէր կէօթիւր . տիկի շարապ սանտըղլարընտան թիւրք հիւքիւմէթի Մարթինի ֆիլէնկիւրի պուլմուշ , ֆէզա պէրապէր պուլընան պուկարլարըն իւզէրինտէն ըահիպէ խիթապ մուղիւր պիր մէթուպ էլէ կէչիւրի-

միշ օլտըղը վէ Տէպրէտէ Միթրօբօլիտին սաքին օլտըղը խանէտէն սիւահար վէ ֆիլէնկիւր պուլընտըղը Սթանպուլտան պիւտիւրի իյօր ։

— Պուկարիանըն Ֆիլիպէ Բա . պարճըգ վէ սայիր չէհիւրէրինտէն գապիլիւր վէ մէթէպ թալէպէլէրի սիւքի սաքէրիլէի վէ իւմիյէի թէրք իտուպ , թիւրքիայա կէչէրէք՝ Մաքէթոնիա գոմիթէլէրի իլէ պիւլէչմէքտէ օլտըղլա . ըրնա տայիր Պապը Ալի մայիւ . մաթ օլտըղընտան , օ կիպիլէրին սիւօրտան կէչմէլէրինի մէն իթմէք իչիւն եհնիտէն շէտիտ թէտ . պիրլէր էլէ ալտըղընը Սթանպուլտան եաղըյօրլար . Հալպուքի Պապը Ալինին ալտըղը պու մայիւ . մաթըն ալու էստսը օլտաւըղընա տայիր Սօֆիատան թէքգիպնամէլէր նէշր օլընտըյօր ։

— Սթանպուլտան մայիս 19 թաբիլի պիր թէլէկրաֆըն պէյանը իւզրէ , չէթէլէրին մուամէլաթը Մաքէթոնիանըն տիկէր վիլայէթլէրինտէ կիւն պէ կիւն աղալմագտա վէ սիւքիւնէթ պուլմագտա օլտըղը կիպի , Սէրէզ սանճաղընտա տախի ըսեան թէսքին օլընըր Ըմըշ . Եալընըզ սօն տէֆա օլարագ մայիս 15 տէ Մանասթըր վիլայէթիւ տախիլինտէ Չալընիք նամքէօյտէ պիր չէթէ կէօրիւնիւպ , պիւ պէքէի գաթլ իթմիշ վէ իսլամ եօլըլարըն իւզէրինէ հիւճուլէ պիր քիշի էօլտիւրմիւշ վէ իքի քիշի եարէլէմիշ օլտըղը , վէ պիր ախէրէ գապիլիլէր եէթի . շուպ , չէթէտէն 7 քիշի գաթլ իթտիքէրինի իւպէ իտէյօր ։

— Նէվրիքօքտա պուկար տէս . բօթըն տէրտէսթիէ հապս իտիլտիկի էհնէպի կաղէթալարընա պիւտիւրիլմիշ իտի . Պապը Ալի պու հալատիսի թէքգիպ իտէյօր ։

— Տիկէր թարաֆտան թիւրք հիւքիւմէթի Սթրումիցա տէսթօ . թը Երէսիմօս եպիսկօպօսըն աղընը պուկար էքղարքընա իսթալէ պիր տիկէր ըահիպին նաս . պընը թէքլիֆ իթտի . Ֆազաթ պիր Մէթրօբօլիտի արգու նասպ իթմէք սէլահիլէթի եալընըզ Սի . նօթա մախսուս օլտըղը ճիհէթլէ . էքսարքհանէ հիւքիւմէթին աղ իթմէսինի թանըմագ իսթէմէլուպ . Սինօթ մէճիսինի թէճէմիւ էլլէմէք իսթէմիշ իսէտէ , հիւքիւմէթ մէճիսին թէճէմիւսինէ միւստտէ իթմէմիշ տիր ։

— Մայիս 5/18 թարիլի Ուլտիքտէն Նայէ Ֆրայէ Բրէսէ կաղէթալարըն վէրիլէն պիր թէլէկրաֆա նաղարէն , թիւրք հիւքիւմէթի Մարգօ Սթօյանֆ վա . նով նամ 25 եալընտա Օլտիտի պիր պուկար տէրտէսթ իթմիշ տիր . պուլըն տիւքեանը Սէլա . նիքտէ Օթման պանգասը գար . չըսընտա օլուպ , լաղըմ գաղըլմըզ օլմաղլէ , իճրա օլընան իսթինթագտա էհէմիլէթի սըրլար

պէյան իթմիշ տիր . պիւթիւն բրլանլար էլէ կէչմիշ . Մարգօ իլէ պէրապէր թիւթօ նամընտա տիկէր պիր Օլտիտի պուկար տախի թուլթուլուշ ։

Ալպանիա

Արնապուլարա գարշը ասայիշի իպգա վէ իսլահաթ իճրա իթմէք իչիւն լաղըմ կէլէն հէր պիր մուամէլէի իյֆա իթմէք պապընտա Սուլթան Սատրապաճ մէզուլիլէթ քեմալիլէ վէրմիշ տիր ։

Բաքա վէ Հազի նամ արնապուլտ գապիլիլէրի Օթմանը հիւքիւմէթիլէ իթաաթ կէօսթէրուպ , իսլահաթըն իճրասընա մուալէֆէթ իթմէմէք վատ իթմիլլէր . Պապը Ալի պու իքի գապիլիլէր իթաա . թընտան սէպիլմէքտէ օլտըղը կիպի , սաաքիւրին իքէք չէհիլնէ կիրմիշ օլմաալ իլէ՝ ղալըր միւշ բիւլաթ գալմաաղընը վէ Արնապուլարա գարշը մուամէլէի տս . բէրիլէ իգթիգա իթմէմէքիլնի պէյան իտէյօր Ըմըշ ։

Ֆազաթ Պապը Ալինին պու պէյանթը հազըգաթտան բէք իրագ տըր . զիրա սաը արնապուլտ . լարըն պէօյիւք գրսըր օրմանլարա վէ տաղլարա չէքիլմիշ օլուպ , քէն . տի իտտաալարընտան վաղ կէչմէմիլլէր տիր . վէ աղ միւստէթ սօրա սաքէրլէր չէքիլմէսինտէ . թէքրար ըսեան սանճաղընը իքէք Ճազօվա վէ սայիր չէհիլլէրին գալէլէրինէ տիքէճէլէր ։

— Իթաաթ կէլէն պաղը արնապուլտ գապիլիլէրին իքի բէյիսլէրի ճէզատան մուաֆ թուլթուլմագ իչիւն Սուլթանտան աֆիլ իսթիւրհամ իթմիլլէր ։

Եանի պուգաաար ըսեան վէ մուգաթէլէտէն սօրա՝ պիր իսլամ արնապուլտըն պուլընը գանատ . մագսըղըն՝ պիւթիւն տէօլլէթլէրին տըզգաթընը պաշգա թարաֆա չէվիլմէք իչիւն էնվայի եալան վէ տէսիսէ ուլտուրմագ խուսուսընտա Երլտըզ քէօլիւ տարը ճէճիտին էմալսըզ պիր ֆագրի . գասը աաա օլընապիլիւր ։

ՏԱԽԻԼԻՑԷ

Պուկարիանըն տախիլի իլլէ . ըլնտէն վէ թիւրքիա իլէ օլան միւնտիպաթընտան տօլայր էհէմ . միլլէթի սալիւմաթ վէ իյզահաթ Սօֆիա մուպիրիմիլլէրին պու տէֆաքի մէթուպընտա միւնտէրիճ օլտըղընտան , պուրատա անլէրի թէքրար իթմէք զիյատէ աաա իտէրիլ . Շու հալտէ գարիւնըմըղըն տըզգաթընը ճէրիտէմիլլէր իւչիւնի սահիֆէսինէ տալէթ իթմէքլէ իգթիֆա օլուլուր ։

— Լվիլէի ճուսա էրթէսի կիւնի Ֆիլիպէտէ պուկար քիլիսէ . սինիլ բէնչէրէսինտէն խըրսըզ կիւլուպ , 4 օգգա կիւլիւշ էչեա չալմըզ վէ միւթէճասիլի էլան էլէ կէչմէմիշ օլտըղը Ֆիլիպէ կաղէթալարըն եաղմըշ տըր ։

— Տ . Տանէվ պիր կաղէթա մուլապիրի իլէ կէօրիւլմէսինտէ շու եօլտա սէօլլէմիշ տիր ։

«Մաքէթոնիաա թէլլիկալթըմըզ օլտաաթ , թիւրքիանըն հաքիմիլլէթին թանըմագտալըզ . պիլլէալըզ Մաքէթոնիաաա գարտաշլարըմըզըն ֆաիտէսինի Պէրլին ահտնամէսի մուհիպ մուհաֆա . գա իթմէք իսթէրիլ ։

«Սէլանիք վուգուաթը ումուլ պուկարլարա ֆէնա թէէսիլ իթտի իսէտէ , Պուկարիաաան թիւրքիայա կիլլիտէն տինամիթ կէչիլլէմիշ տախի օլաա , Պուկարիաա մէտուլ օլմաալ . Սինօրլար շիտտէթլէ մուհաֆաա օլընտըյօր , թիւրքիաաա պուկարլարը թաադի պիտէն թիւրք հիւքիւմէթի ըսեան մէսուլիլէթինի քէնտի իւզէրինտէն պաշգա հիւքիւմէթլէր իւզէլլինէ ալմաալ»

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍԱԹԷՐ

Սուլթան պիր թագըմ նիշանլարլէ թէքրար միլլէթաաշլարըմըզըն կէօղլուլի պօյալագ իսթէմիշ տիր ։

Կրօն . Ճողով տտնապետլէրի Գրիգօրիա վէ վահրամ եպիսկօպուլարա իքիւնի Մէճիտիլլէ նի . շանլարը՝ Քաղաքական Ճողով աղալարընտան Գարբիլէ էֆ . Ն . բատուկիւնա մուրասա Մէճիտիլլէ նիշանը , Գրիգօր էֆ . Գա . բալէօգեանա պիրիւնի վէ Եուսուֆեան Տիգրան վէ Տէր Ներսէսեան Տիգրան էֆէնտիլլէր իքիւնի Օթմանիլլէ նիշանլարը , վէ Տիւպըր Չարիէ էֆէնտիլլէ իսթիլաղ նըշանը վէրիլմիշ ։

Բաթրիքհանէ մէճիսի աղալարընա վէրիլլէն պու նիշանլարըն միլլէթ ինտիտէ ղէրլէ գատար էհէմիլլէթի օլմաալ , զիրա էօթէ . տէ էրմէնի էհալիսինէ գարշը թէքիլլէթը ֆէվզէլաաթ էլան տէվալ իթմէքտէ տիր . Օրմանեանըն իսթիֆաաըն կէրի ալտըրմագ իչիւն Սուլթան վաալարընտան հէշ պիրին իճրա իթտիլմէտի ։

ԹԱՏՐՈՆ «ՊՕՐԻՍ»

(Ամսոնային Երշան)

ՆԱՏԵԺՏԱ

Հայ դերասանական խումբը՝ այս գիշեր ճիշդ ժամը Յին պիտի ներկայացնէ՝

ՍՈՒՏ ԵՐԴՈՒՆԱԼԸ

Կըրէրիլ 3 արար

ԵՐԳ ԵՒ ՊԱՐՏԻՔ . — Օր . Էլէնիլ . Գաթիլայի եւ Միս ՖԼՈՐԱՒ կողմէն՝ ԱԲՐՈՊԱԹ . Եանի Տրականսֆի կողմէ՝

Նորէկ Ռուսական խումբը պիտի պարէ եւ երգէ քաաճայն , երկճայն երգեր . նոյնպէս ուսական հարսանիք ՎՕՏՎԻԼԸ , Տրք . եւ Տիկն . Վլատիմրօֆ եւ Իվանօֆի կողմէն ։

ՄՈՒՐԱՅԻՆ ԿԻՆԸ

Թատերախաղ 4 արար

Առաջնորդուլթեմաճ Տ . ՊԱՊԱԵԱՆԻ

Կիրակի գիշեր Բ . ներկայացուին ։

Одговоръ на Н. Драгулова

Печатница Взаимность Варна